**Արձանագրություն N 2**

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-24/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5 — 10 հունվարի 2024թ. ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ազարյան, Ա. Թումանյան, Ս. Գարանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

## 1. *Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ*

| *Չափաբաժնի համարը* | *Չափաբաժնի անվանումը* | *Ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| 1 | Կուտակիչ մարտկոցներ /ակումլյատոր/ | 680 000 |
| 2 | Կուտակիչ մարտկոցներ /ակումլյատոր/ | 540 000 |
| 3 | Կուտակիչ մարտկոցներ /ակումլյատոր/ | 380 000 |
| 4 | Ավտոմեքենաների անիվներ | 45 000 |
| 5 | Ավտոմեքենաների անիվներ | 1 044 000 |
| 6 | Ավտոմեքենաների անիվներ | 800 000 |
| 7 | Ավտոմեքենաների անիվներ | 160 000 |
| 8 | Ավտոմեքենաների անիվներ | 160 000 |
| 9 | Ավտոմեքենաների անիվներ | 672 000 |
| 10 | Ավտոմեքենաների անիվներ | 714 000 |
| 11 | Ավտոմեքենաների անիվներ | 860 000 |
| 12 | Ավտոմեքենաների անիվներ | 288 000 |
| 13 | Ավտոմեքենաների անիվներ | 840 000 |
| 14 | Ավտոմեքենաների անիվներ | 179 520 |
| 15 | Ավտոմեքենաների անիվներ | 144 000 |
| 16 | Հակասառից հեղուկ՝ A դասի կոնցետրատ, A-65 դասի՝ 65 C սառման ջերմաստիճանով | 255 000 |
| 17 | Շարժիչի յուղեր | 1 032 500 |
| 18 | Շարժիչի յուղեր | 552 000 |

## 2. *Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ*

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 08.01.2024թ.-ին ժամը 10:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 09.01.2024թ.-ին ժամը 10:00-ին:

## 3. *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.*

| **Հ/հ** | **Մասնակիցների անվանումները** | **Հասցեներ** |
|---|---|---|
| 1 | Արպանիվ ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 09209297, ք. Երևան, Նար-Դոսի 122, automaxtender@mail.ru , հեռ. 091 20 56 24 |
| 2 | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | ՀՎՀՀ՝ 23162059, ք. Երևան, Նոր-Արեշ 15 փող. 7 շ., բն. 12, avto878787@mail.ru , հեռ. 093 60 19 09 |
| 3 | «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02294699, ք. Երևան, Բագրատունյաց 70/22, sag@krafthem.am, հեռ. 033 02 63 55 |
| 4 | ԺԱԿ ԵՎ ԳՈՌ ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 03012667, ք. Հրազդան, Կենտրոն 19/40, saturn90@mail.ru , հեռ. 091 33-37-11 |
| 5 | Յունիքիմ ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02242529, ք. Երևան, Արտաշատի խճուղի 11, info@unichemllc.com, հեռ. 043 49 77 99 |

## 4. *Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ*

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-24/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

### *5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

eauction.armeps.am համակարգի միջոցով հարցումներ չեն եղել:

### *6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ*

| Չափաբաժնի համար | Գնման առարկայի անվանումը | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | Կուտակիչ մարտկոցներ /ակումլյատոր/ | Արպանիվ ՍՊԸ | 680 000 | 562833 | 20 % | 675399.6 | 380000 | 20 % | 456 000.00 |
| | | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | | 680000 | 0 % | 680000 | 394300 | 0 % | 394 300.00 |
| 2 | Կուտակիչ մարտկոցներ /ակումլյատոր/ | Արպանիվ ՍՊԸ | 540 000 | 447125 | 20 % | 536550 | 380000 | 20 % | 456 000.00 |
| | | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | | 540000 | 0 % | 540000 | 385500 | 0 % | 385 500.00 |
| 3 | Կուտակիչ մարտկոցներ /ակումլյատոր/ | Արպանիվ ՍՊԸ | 380 000 | 314750 | 20 % | 377700 | 245000 | 20 % | 294 000.00 |
| | | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | | 380000 | 0 % | 380000 | 256800 | 0 % | 256 800.00 |
| 4 | Կուտակիչ մարտկոցներ /ակումլյատոր/ | Արպանիվ ՍՊԸ | 45 000 | 37308 | 20 % | 44769.6 | 37308 | 20 % | 44 769.60 |
| 5 | Ավտոմեքենաների անիվներ | Արպանիվ ՍՊԸ | 1 044 000 | 863100 | 20 % | 1035720 | 550000 | 20 % | 660 000.00 |
| | | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | | 1044000 | 0 % | 1044000 | 788300 | 0 % | 788 300.00 |
| 6 | Ավտոմեքենաների անիվներ | Արպանիվ ՍՊԸ | 800 000 | 660533 | 20 % | 792639.6 | 520000 | 20 % | 624 000.00 |
| | | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | | 800000 | 0 % | 800000 | 553300 | 0 % | 553 300.00 |
| 7 | Ավտոմեքենաների անիվներ | Արպանիվ ՍՊԸ | 160 000 | 132566 | 20 % | 159079.2 | 132566 | 20 % | 159 079.20 |
| 8 | Ավտոմեքենաների անիվներ | | 160 000 | Չկայացած | | | | | |
| 9 | Ավտոմեքենաների անիվներ | Արպանիվ ՍՊԸ | 672 000 | 553866 | 20 % | 664639.2 | 553866 | 20 % | 664 639.20 |
| | | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | | 672000 | 0 % | 672000 | 672000 | 0 % | 672 000.00 |
| 10 | Ավտոմեքենաների անիվներ | Արպանիվ ՍՊԸ | 714 000 | 591966 | 20 % | 710359.2 | 591966 | 20 % | 710 359.20 |
| | | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | | 714000 | 0 % | 714000 | 714000 | 0 % | 714 000.00 |
| 11 | Ավտոմեքենաների անիվներ | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | 860 000 | 860000 | 0 % | 860000 | 860000 | 0 % | 860 000.00 |
| 12 | Ավտոմեքենաների անիվներ | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | 288 000 | 288000 | 0 % | 288000 | 288000 | 0 % | 288 000.00 |
| 13 | Ավտոմեքենաների անիվներ | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | 840 000 | 840000 | 0 % | 840000 | 840000 | 0 % | 840 000.00 |
| 14 | Ավտոմեքենաների անիվներ | Արպանիվ ՍՊԸ | 179 520 | 149333 | 20 % | 179199.6 | 149333 | 20 % | 179 199.60 |
| | | ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի | | 179520 | 0 % | 179520 | 179520 | 0 % | 179 520.00 |
| 15 | Ավտոմեքենաների անիվներ | Արպանիվ ՍՊԸ | 144 000 | 118466 | 20 % | 142159.2 | 118466 | 20 % | 142 159.20 |
| 16 | Հակասառիչ հեղուկ՝ A դասի կոնցետրատ, A-65 դասի՝ 65 C սառման ջերմաստիճանով | «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ | 255 000 | 210000 | 20 % | 252000 | 88000 | 20 % | 105 600.00 |
| | | ԺԱԿ ԵՎ ԳՈՌ ՍՊԸ | | 212000 | 20 % | 254400 | 92900 | 20 % | 111 480.00 |
| | | Յունիքիմ ՍՊԸ | | 212500 | 20 % | 255000 | 192900 | 20 % | 231 480.00 |
| 17 | Շարժիչի յուղեր | «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ | 1 032 500 | 859000 | 20 % | 1030800 | 672000 | 20 % | 806 400.00 |
| | | ԺԱԿ ԵՎ ԳՈՌ ՍՊԸ | | 860000 | 20 % | 1032000 | 681410 | 20 % | 817 692.00 |
| 18 | Շարժիչի յուղեր | «ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ | 552 000 | 459000 | 20 % | 550800 | 410000 | 20 % | 492 000.00 |
| | | ԺԱԿ ԵՎ ԳՈՌ ՍՊԸ | | 459500 | 20 % | 551400 | 415410 | 20 % | 498 492.00 |

Աճուրդն ամփոփվել է **09.01.2024թ.-ին** և Համակարգի կողմից

- 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 14 և 15 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **Արպանիվ ՍՊԸ-ն,**
- 11, 12 և 13 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի-ն,**
- 16, 17 և 18 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ն:**

***7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին***

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ

1. Համակարգի կողմից 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 14 և 15 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Արպանիվ ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժիններով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ «Արտադրողի անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել արտադրողի կազմակերպաիրավական անվանումը:

2. Համակարգի կողմից 11, 12 և 13 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները: Նախավերջին պարբերությունը չի համապատասխանում հրավերում առկա Հավելված 1-ի օրինակելի ձևին:
- Ներկայացված լիազորագրին կցված չէ լիազորված անձանց անձնագրերի կամ նույնականացման քարտերի պատճենները:
- 11-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժիններով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ «Ֆիրմային անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, «Ապրանքային նշան» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, «Արտադրողի անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել արտադրողի կազմակերպաիրավական անվանումը:

3. Համակարգի կողմից 16, 17 և 18 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) կազմակերպաիրավական անվանումը պետք է գրված լինի հայերեն, ռուսերեն լեզվով անվանման դիմաց պետք է գրել ռուսերեն: Լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները: Նախավերջին պարբերությունը չի համապատասխանում հրավերում առկա Հավելված 1-ի օրինակելի ձևին:
- Ներկայացված Հավելված 1.3-ում ակտիվ չէ իրական շահառուների վերաբերյալ կայքէջի հղումը:
- Ներկայացված լիազորագրին կցված չէ լիազորված անձանց անձնագրերի կամ նույնականացման քարտերի պատճենները:
- 16-րդ, 17-րդ և 18-րդ չափաբաժիններով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ «Ֆիրմային անվանում» սյունակում անհրաժեշտ է գրել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը: 18-րդ չափաբաժնով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ «Տեխնիկական բնութագիր» սյունակում ավելացնել «Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:» նախադասությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-24/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 11.01.2024թ.-ին նիստը կասեցնել՝ ծանուցել **Արպանիվ ՍՊԸ**-ին, **ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի**-ին և **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին***

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 15.01.2024թ. ժամը 16:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**9. 15.01.2024թ. ժամը 16:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ**

Նիստը վերսկսվեց 15.01.2024թ. ժամը 16:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **Արպանիվ ՍՊԸ**-ն, **ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի**-ն և **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

- **Արպանիվ ՍՊԸ-ի** հայտը 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 14 և 15 չափաբաժինների մասով գնահատել բավարար,
- **ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի**-ի հայտը 11, 12 և 13 չափաբաժինների մասով գնահատել բավարար
- **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ի** հայտը 16, 17 և 18 չափաբաժինների մասով գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:*

***10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ***

18.01.2024թ.-ին Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- ✓ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 14 և 15 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Արպանիվ ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից,
- ✓ 11, 12 և 13 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից,
- ✓ 16, 17 և 18 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ»** ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ 1-3-րդ, 5-6-րդ, 9-10-րդ, 14-րդ, և 16-18-րդ չափաբաժինների մասով անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ 4-րդ, 7-րդ, 11-13-րդ և 15 չափաբաժինների մասով անգործության ժամկետ չի կիրառվում:

10.5 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:

10.6 ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

10.7 Հաստատել 8-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

նախագահ՝ ____________________ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ ____________________ Արմեն Ազարյան

____________________ Աննա Թումանյան

____________________ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ ____________________ Նաիրա Բաբայան